

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Նոյ. 17 աեղի ունեցաւ Հռովմում այն ծէսերի հանդիսաւոր բացումը, որ նուիրուած էին Յովհաննա Դ' Արկի սրբացման հարցին: Հռոմէական կանոններով հաստատած ապագայ երանուհւոյ հերոսութեանց երրորդ և վերջին քննութիւնն էր այս: Սպասուում է պապի կոնդակին, որով Յովհաննա Դ' Արկը կը յայտարարուի «երանելի» (beata). Նորան իբրև սուրբ (sankta) հաստատելուն համար կը պահանջուին ոչ պակաս քան չորս նոր հրաշքներ: Ասում են որ Յովհաննա Դ' Արկի սրբացումն հանդուցեալ պապի սրբազան խորհուրդն էր և երրորդ ժողովի միտքը, որին ներկայ լինելը մահն արգելեց, նորա վերջին մտածման նիւթն էր կազմում: Անկասկած, Ֆրանսիայի հերոսուհու սրբացումն նոյն երկրում՝ որն աւելի ու աւելի կտրուում է կաթոլիկութիւնից և կրօնից կրօնական շարժումն աւելի բարձրացնելու համար պակաս դեր չէ խաղում:

Կղերիկոսական կուսակցութեան հակումն, հայեացքը դէպի իրերի ներկայ դրութիւնը, նոյնպէս և նորա յոյսերն աւ ծրագրները կարելի է տեսնել այս օրերս յայտարարուած՝ Տիւրինա եպիսկոպոսի իւր հօտին ուղղած թղթի մէջ: Քննելով Յալլուի օրէնքների փոփոխութեան և տէրութիւնից եկեղեցւոյ հեռանալու նախագիծը, նա դորա մէջ գտնում է երկրի իսկական դրժբադատութիւնը: Եկեղեցուց խլում են վերջին կարողութիւնը՝ ազատութիւնը, որի հետ հաշտուել ոչ մի կերպ չէ կարելի:

[Եթէ մենք, ճշմարտութեան բացարձակ ռոմանացրութեամբ, պարտքի կատարման զլացմամբ, որով Ֆրանսիան պայմանի հիման վերայ պարտաւորում էր կուլտուրայի ել և մուտից կրճատել, մենք ունէինք ազատութիւն մեր պարտականութիւնները կատարելու, հոգուն եկեղեցուն և Աստծուն ծառայելու, ազատութիւն, որ բողոքական անգղիան և միացեալ նահանգները տալիս են կաթոլիկներին, այն ժամանակ մենք ուրախութեամբ կը համբերէինք ամին տեսակ թշուառութեան: Բայց նոքա, որ

կառավարում են երկիրը, համաձայն չեն մեզ ազատութիւն տալուն: Նորա կամենում են կործանել կրօնը և իրենց նպատակին հասնելու համար կամենում են շղթայակապ անել մեր սրբերն ու ձեռները և մեր բերանը գոցել: Նորա շատ լաւ գիտեն, որ եթէ մենք ազատ լինինք, իրենք պիտի յաղթուին:]

Ապա բացատրելով նա իրերի սոյն գրութեան պատճառները իւր համախոհներին տալիս է փորձնական խորհուրդ, որ կրում է պատերազմական բնուորութիւն.

Ի՞նչ անել, որպէսզի պաշտպանենք քրիստոնեայ ֆրանսիան, հեռացնենք գժբախտութիւնները, որոնք սպառնում են մեզ: Պէտք է անել դարձեալ նոյնը, ինչ որ առաջ, միայն այժմ պիտի գործել աւելի դրականապէս ջերմեռանդութեամբ, աւելի ինքնուրացութեամբ քան թէ առաջ: Պէտք է ժողովուրդը քրիստոնեայ դարձնել, որի համար պիտի օգտուել մեր ժամանակի օրինական և ազնիւ ուղղութիւններից, կրկնապատկել հաստատութիւններն ու ընկերութիւնները, արժարձել եռանդը և համարձակութիւնը մեր քրիստոնեաների խմբակցելով նոցա և ցոյց տալով թէ նոքա ի՞նչ բանի են ընդունակ, համոզել, որ բարին և օգուար, մի երկրի կանգնումն, թշնամուն յաղթելը և սարսափելի գժբախտութեանց առաջն առնելը անկարելի է առանց ներքին համոզման, անգաղար գործունէութեան և ինքնամերժման ոգու:

Նորա յայտնում է զմեր սոսկալի գործունէութեան

Պիոս X. պապի վերաբերմունքը դեպի սլաւոն ժամասացութիւնը: Պիոս X պապը, դեռ ևս կարողինալ և վենեցիայի պատրիարք, քանիցս խօսել է կաթոլիկ սլաւոն երկրներում սլաւոնական ժամասացութեան հակառակորդը չը մոռացաւ և այժմ խօսում է իբրև պապ, ինչպէս ճշտում է Հռովմից ստացուած տեղեկութիւններից: Կաթոլիկ-Հռովմէական ծէսերի կոնգրեգացիան ուղարկել է մօտերս շրջաբերականներ Գարեցիու, Չադարսկի և Չագրիբսիու արքեպիսկոպոսներին, որոնց մէջ կառավարիչ Հռովմը յիշեցնում է նոցա, որ քահանաներից ոչ որ առանց արքեպիսկոպոսի և կուրիայի (հոգևոր դատաստան) գիտութեան չը համարձակուի ժամասացութիւնը սլաւոնական լեզուով կատարելու և կամ թէ որևէ բան ձեռնարկել յօգուտ սրա: Աւրիշ խօսքով, այսօրուանից սկսած, այլևս խօսք չի կարող լինի սլաւոնների մօտ մայրենի լեզուով ժամասացութեան, ինչ որ Լեոն XIII պապի կենդանութեան և նորա քարաուղար Տումպուլի օրով արդէն համարեա վճռուած էր: Բացի այդ վե-

բոյնշեալ շրջաբերականներն մէջ առաջարկում է արքեպիսկոպոսներին, որ սորա իրենց հօտին համոզեն ու Գահի կամքին միանդամայն հնազանդելու: Ինչոքի կօնգրեգացիան, բացի այդ, յիշում է և 1900 թ. հրատարակուած մի ուրիշ կարգադրութիւն, որով սլաւոն ժամասացութիւնը թոյլ է տրւում միայն այն համայնքների մէջ, որտեղ նա գերիշխող է եղել վերջին 30 տարիների ընթացքում: Ընդհանրապէս Գալմացիայում և սլաւոնկաթոյիկ ուրիշ երկրներում այն կարծիքն է տիրում, որ նոր պապը մաադիր է սլաւոնական ժամասացութիւնը բոլորովին դադարեցնել:

ԲՈՂՈՒՔԸ ԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ

Մօտերս լոյս տեսած Սահսին—Վէյմարի դքսութեան սինօզի եկեղեցական հաշիւը լի է եկեղեցական կեանքի անպայման անկման դառն դանդաաններով: Եկեղեցի յաճախելը օրըստօրէ ընկնում է: Սօցիալ—դեմոկրատիական քարոզչութիւնը, որ նոյն իսկ գիւղերի մէջ մուտք է գտել, ժողովրդի մեծ մասն մէջ կրթել է անտարբերութիւն դէպի եկեղեցին և կրօնը: Ուսանողութեան եկեղեցական կեանքը, որից կազմակերպում է բարձր դասակարգը—հաւասար է գերօյի—նորա այլ ևս ոչ մի հետաքրքրութիւն դէպի եկեղեցին ցոյց չեն տալիս: Կառավարչական շրջաններումն էլ կրօնական անտարբերութիւնը մեծ է, և այս նախատինքը պատկանում է նաև եկեղեցւոյ հովիւներին: Բազմաթիւ եկեղեցական ընդերութիւններ և ժողովներ, ինչպէս օրինակ վերջերս կազմուած Սահսոնիայի դքսութեան սօցեալ—աւետարանական ժողովը, նախագծել են կրօնը պաշտպանելու համար մի շարք միջոցներ, սակայն դժբա հաւատը գիտական տեսակէտից պաշտպանելու և մասնաւոր գաշնակցութիւններ կազմակերպելու ընաւորութիւնն ունին:

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՅԻ

Ռուսաց լեզուի հայածումն Աւստրո-Վենգրիայում: Ռուսաց լեզուն հալածում է Աւստրո-Վենգրիայում այն ժամանակ, երբ ռուսաց կայսրութեան թէ բարձր և թէ ստորին կրթական հաստատութիւնների մէջ դերմաներէնը ընդունուած է իբրև դասական աւարկայ և ոչ սր չէ մտածում սրև է տեղ այդ լեզուի դէմ արգելք դնել: Լիւբլեան քաղաքում ապրում և հասա-